20.01.2021 թ. ք. Երևան

# ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

## ՈՐՈՇՈՒՄ թիվ 000799/07

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննելով 20.01.2021թ. թիվ 799 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

<< ԼԵՈ ՔՈՄՓՆԻ>> ՍՊԸ-ի տնօրեն Մարգարիտա Շահինյանը (ՀՎՀՀ՝ 03550907, գ. Մայակովսկի 12փ 15) 20.10.2020թ. ներմուծման հարկային հայտարարագիրը և հայտարարությունը «Հայաստանի Հանրապետության և եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի ներկայացրել հարկային մարմին, որի համար նախատեսված է վարչական պատասխանատվություն համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի:

Կողմը գործի քննության վայրի և ժամի մասին պատշաճ ծանուցված լինելով՝ չի ներկայացել գործի քննությանը, առարկություն, բացատրություն չի ներկայացրել:

Այն փաստը, որ Կողմը վերջին մեկ տարվա ընթացքում կատարել է իրավախախտում (18.09.2020թ. թիվ 435903/07 որոշումը), սույն վարչական գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ, 244[2] , 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի՝ Մարգարիտա Շահինյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 (քսան հազար) դրամի չափով

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ** **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ստանալու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվհեմարին. **900005240487՝** վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է հարկադրանքի օրենսդրությամբ սահմանված կարգով: